ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԶԲԱՂՎԱԾ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ (XIX դ. 80—90-ական թվականներ)

ԳԱՍՊԱՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

XIX դ. վերջին տասնամյակներում Արևելյան Հայաստանի արդյունաբերությունը շարունակում էր մնալ զարգացման համեմատաբար ցածր մակարդակի վրա։ Ձեռնարկությունները գերազանցապես մանր էին՝ 3—5 բանվորով։ Հիմնականում իշխում էր ձեռքի աշխատանքը։

Արևելյան Հայաստանի արդյունաբերության ճյուղերից թերևս միայն պղինձարդյունաբերությունն էր, որում առավել ցայտուն էր արտահայտված կապիտալիստական հարաբերությունների զարգացումը (մեքենայացված արտադրություն, մեծ թվով բանվորների առկայություն և այլն)։ Պղինձարդյունաբերությունը զարգանում էր բավական արագ տեմպերով և արդեն դարի վերջին երկրորդ տեղն էր գրավում ռուսական կայսրությունում[1]։ Վ. Ի. Լենինը, խոսելով արդյունաբերական նոր շրջանների մասին, Հարավի հետ միասին հիշատակել է նաև Կովկասը, «որի համար,— նշել է նա, —նույնպես բնորոշ էր լեռնարդյունաբերության զարմանալի աճը հետռեֆորմյան ժամանակաշրջանում»[2]։ 1900 թ. Անդրկովկասը տալիս էր ցարական Ռուսաստանի արդյունաբերական արտադրանքի 6,9%-ը, մինչդեռ նրա բնակչությունը կազմում էր կայսրության բնակչության ընդամենը 3,9%-ը[3]։ Թեև պղինձարդյունաբերությունը Արևելյան Հայաստանում, ինչպես նաև Ռուսաստանում, զարգանում էր համեմատաբար արագ տեմպերով, բայց չէր բավարարում վերելք ապրող արդյունաբերության պահանջները։ Այդ պատճառով էլ ներմուծվող պղնձի քանակը գնալով սաճում էր[4]։ 1885 թ. կառավարությունը բարձրացրեց ներմուծվող պղնձի մաքսը՝ մեկ փթի համար 60 կոպեկից հասցնելով 1 ռ. 50 կոպեկի։ Դրա հետ մեկտեղ պղնձահանքերից գանձվող լեռնային հարկերն իջեցվեցին։ Նշված միջոցառումները, ինչպես նաև օտարերկրյա կապիտալի ներթափանցումը, նպաստեցին պղինձարդյունաբերության հետագա վերելքին։

Արևելյան Հայաստանի պղինձարդյունաբերության հիմնական շրջանները Ալավերդին ու Զանգեզուրն էին։ Որոշ քանակությամբ պղինձ էր արտադրվում նաև Միխնանայում։ Հետագայում՝ XX դ. սկզբին, պղնձի հանքեր հայտնաբերվեցին Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառի Թեմիր-Մաղարա և Նախիջևանի գավառի Շաքար-Դարա վայրերում[5]։ Պղինձ արտադրվում էր նաև Ալեք-

---

1 «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, Երևան, 1981, էջ 58։

2 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 3, էջ 621։

3 «Динамика Российской промышленности в связи с развитием народного хозяйства за 40 лет (1887—1926 гг.)», I, ч. I, под ред. В. А. Барзарова, В. Е. Варзара, В. Г. Громана, М., 1930, с. 7—8; *Մ. Ադոնց. Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը 20-րդ դարի սկզբին, Երևան, 1968, էջ 188։*

4 А. Д. Брейтерман, Медная промышленность России и мировой рынок, ч. II. Л., 1925, с. 114.

5 *Այդ հանքերի մասին տե՛ս Հայկական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ), ֆ. 195, ց. 1, գ. 172—173։*

սանդրապոլի գավառի Սիսմադան և Ելիզավետպոլի գավառի Ղազախի տեղամասում (Դիլիջան)։

Արևելյան Հայաստանում գործող հնագույն և կարևոր հանքավայրերից էր Ախթալան, որը պատկանում էր Լորիս Մելիքովներին։ Հանքերի շահագործման իրավունքը նրանք ստացել էին դեռևս 1846 թ.[6]։ 1886 թ. Լորիս Մելիքովները 150 հազար ռուբլով հանքերի շահագործման իրենց իրավունքը զիջեցին ֆրանսահպատակ Է. Թիերին[7], իսկ 1887 թ. այդ հանքերը, 131 դեսյատին ընդհանուր տարածությամբ, դարձան նույն այդ թվականին կազմակերպված ֆրանսիական «Ախթալայի հանքերի ընկերության» սեփականությունը[8]։ 1817 թ. Ալավերդուց մոտ 20 կմ հյուսիս-արևմուտք իշխան Արղութինսկի-Երկայնաբազուկի կալվածքը հանդիսացող Շամլուղում հայտնաբերված պղնձի հանքերը 1887 թ. Ալավերդու հանքերի հետ ևս դարձան նորաստեղծ ֆրանսիական ընկերության սեփականությունը[9]։ Տաս տարի անց՝ 1897 թ., այդ հանքերը և կից գործարանները անցան ֆրանսիական մեկ այլ, ավելի հզոր՝ «Կովկասի արդյունաբերական և մետաղագործական ընկերության» տնօրինությանը։

Արևելյան Հայաստանի պղնձարդյունաբերության երկրորդ խոշոր կենտրոնի՝ Զանգեզուրի, հանքերի ինտենսիվ շահագործումը սկսվեց XIX դ. 80-ական թվականներից։ Դարավերջի երկու տասնամյակներին նշված շրջանում գործում էին Ղաթարի, Կավարտի, Թեյի, Հալիձորի, Ուզուրչայի, Բարաբաթումի, Լաղաևի և Աթկիզի հանքավայրերը։ Զանգեզուրում գոյություն ունեին ևս մի քանի այլ հանքավայրեր, որոնք նշանակալից դեր չէին խաղում։ Սակայն հարկ է նշել, որ հանքերի իրացման տեխնոլոգիան դեռևս գտնվում էր ցածր մակարդակի վրա, տեխնիկական զինվածությունը բավարար չէր։ Հանքավայրերը և հումքը օգտագործվում էին անխնայողաբար։ Ավելին, Ալավերդու և Շամլուղի «հանքերի շահագործումը կատարվում էր գիշատիչ ձևով»[10]։ Դրությունն այդպիսին էր նաև մնացած հանքավայրերում։ Արևելյան Հայաստանի հանքավայրերի և հանքանյութի հանույթի մասին պատկերացում է տալիս № 1 աղյուսակը[11]։

Ինչպես երևում է № 1 աղյուսակից, 1887—1888 թթ. բոլորից շատ պղնձի հանքաքար է արդյունահանվել Ղաթարի հանքավայրերում։ 1888 թ. սկսած ֆրանսիական ընկերության ներդրած կապիտալների և տեխնիկական զինվածությունը բարձրացնելու հետևանքով Ալավերդու հանքավայրերի արտադրողականությունը կտրուկ բարձրանում է. դրանք արդեն 1889 թ. շատ ավելի արտադրանք են տալիս, քան Ղաթարինը։ Ալավերդու հանքավայրերի արտադրողականության վերելքը շարունակվեց նաև հաջորդ տարիներին և, 1887 թ. հա-

---

6 Центральный государственный исторический архив Грузинской ССР (далее ЦГИА Груз. ССР), ф. 264, оп. 1, д. 143, л. 3—4.

7 Բ. Դ. Մելքումյան, Հայաստանի պղնձարդյունաբերության պատմություն, Երևան, 1972, էջ 64։

8 Центральный государственный исторический архив СССР (далее ЦГИА СССР), ф. 37, оп. 24, д. 533, л. 394.

9 Նույն տեղում։

10 С. Гулишамбаров, Обзор фабрик и заводов Закавказского края, Тифлис, 1894, с. 57.

11 Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների հիման վրա. «Сборник статистических сведений о горнозаводской промышленности России (далее «Сборник») в 1587 г.», СПб., 1890, с. 144; «Сборник в 1888 г.», СПб., 1891, с. 165—166; «Сборник в 1889 г.», СПб., 1892, с. 7; «Сборник в 1890 г. », СПб., 1892, с. 135; «Сборник в 1891 г.», СПб., 1893, с. 151; «Сборник в 1892 г.», СПб., 1895, с. 167; «Сборник в 1893 г.», СПб., 1896, с. 176— 179; «Сборник в 1894 г.», СПб., 1896, с. 198—199; «Сборник в 1895 г.», СПб., 1897, с. 190—191; «Сборник в 1896 г.», СПб., 1899, с. 210—211; «Сборник в 1897 г.», СПб., 1899, с. 194—195; «Сборник в 1898 г.», СПб., 1900, с. 193; «Сборник в 1899 г.», СПб., 1901, с. 199; «Сборник в 1900 г.», СПб., 1903, с. 210—211

Աղյուսակ № 1

Պղնձի հանքաքարի հանույթն Արևելյան Հայաստանում ըստ տարիների (փթերով)

Գործող հանքերը*	1887 թ.		1888 թ.		1989 թ.		1890 թ.		1891 թ.		1892 թ.		1893 թ.	
	գործող հանքերի քանակը	հանքանյութը	գործող հանքերի քանակը	հանքանյութը	գործող հանքերի քանակը	հանքանյութը	գործող հանքերի քանակը	հանքանյութը	գործող հանքերի քանակը	հանքանյութը	գործող հանքերի քանակը	հանքանյութը	գործող հանքերի քանակը	հանքանյութը
1. Ալավերդու	2	14.790	2	56.640	2	101.940	1	147.174	1	12[illegible].140	1	200.196	1	206,280
2. Շամլուղի*	2	540	2	300	2	600	1	3.090	1	1.251	1	120	1	14,009
3. Սիամադանի	—	—	1	135	1	6.870	3	3.240	2	128.391	1	42.60	2	10,320
4. Դիլիջանի	1	13.692	1	10.043	1	14.058	1	9.400	1	7.716	2	11,190	2	6,388
5. Ղաթաբի	3	63.371	5	46.898	3	99.691	8	84.210	9	68.965	6	67.675	7	107,458
6. Կավարտ-Ուզուբչայի	3	74.660	2	62.315	8	38.200	4	35.010	4	44.634	2	40.894	4	98,592
7. Աքկիզի	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	2	1,600
8. Լազարևի	1	13.416	3	39.245	3	37.407	3	31.915	2	23.796	4	30.925	3	31,492
9. Հալիձորի	2	23.472	4	40.874	3	45.484	2	28.236	2	52.062	2	49.267	2	44,847
10. Թեյի	2	1000	2	200	2	1700	2	200	1	100	—	—	—	—
Ընդամենը	19	230171	22	256650	25	345950	25	364177	23	456218	19	404527	24	522366

* 1887 թ. գործել են նաև Ախթալայի երեք հանքավայրերը, որոնց հանույթը կազմել է 25.230 փութ, 1890 թ.՝ Անտոնիևի, Բարաթաումի, Արալխ-Կարիրի (5)՝ 21.702 փութ, 1891 թ. Բարաթաումի (2)՝ 2.163 փութ, 1893 թ. Անտոնիևի՝ 1.380 փութ, 1897 թ. Դսեզի՝ 100 փութ։ Այս տվյալները ավելացված են համապատասխան տարիների ընդհանուր գումարին։

Աղյուսակ № 1 (շարունակություն)

Գործող հանքերը	1894 թ.		1895 թ.		1896 թ.		1897 թ.		1898 թ.		1899 թ.		1900 թ.	
	գործող հանքերի քանակը	հանքարդյունքը	գործող հանքերի քանակը	հանքարդյունքը	գործող հանքերի քանակը	հանքարդյունքը	գործող հանքերի քանակը	հանքարդյունքը	գործող հանքերի քանակը	հանքարդյունքը	գործող հանքերի քանակը	հանքարդյունքը	գործող հանքերի քանակը	հանքարդյունքը
1. Ալավերդու	1	280,020	1	149,860	1	147,260	1	152,500	1	23,025	1	707,037	1	536,458
2. Շամլուղի	1	100	—	—	—	—	1	100	1	5,000	1	41,298	1	6,650
3. Սիսմաղանի	2	16,055	1	300	1	180	1	14,570	2	8,460	2	480	—	—
4. Դիլիջանի	1	4,320	1	2,270	1	4,100	1	1,060	—	—	1	15	—	—
5. Ղաթարի	9	101,166	6	110,205	5	136,852	9	185,152	5	55,721	5	142,403	2	103.233
6. Կավարտ-Ուղուրչայի	4	77,038	5	56,210	3	57,650	5	61,956	3	51,681	3	45,627	3	90,727
7. Ամկիդի	2	500	2	1,932	1	100	1	135	—	—	—	—	—	—
8. Լաղարևի	3	24,613	2	15,911	3	23,289	4	45,842	3	20,804	—	—	—	—
9. Հալիձորի	3	45,766	2	51,418	2	38,449	3	55,413	3	41,600	3	27,602	1	21,898
10. Թեյի	—	—	—	—	—	—	—	—	2	4,120	—	—	—	—
Ընդամենը	26	519,578	20	388,106	17	407,881	26	516,728	20	210,411	16	964,462	8	758,966

մեմատությամբ, 1900 թ. ավելացավ մոտ 36,6 անգամ։ Նշված շրջանում ավելացավ նաև Ղաթարի հանքերի արտադրողականությունը (1,6 անգամ), բայց հանույթի բացարձակ քանակով չհասավ Ալավերդու հանքավայրերին։ Խոշորագույններից էին նաև Կավարտ-Ուզուրչայի, Լազարևի ու Դիլիջանի հանքավայրերը, որոնց արտադրանքը, սակայն, գնալով նվազում էր։ Ընդհանուր առմամբ, 1887—1900 թթ. Արևելյան Հայաստանում պղնձի հանքաքարի հանույթը աճում է մոտ երեք անգամ։ Դրան նպաստում էր նաև ցարական կառավարության հովանավորող քաղաքականությունը (լեռնային դեպարտամենտը տարեցտարի ընդլայնում էր հետախուզական աշխատանքները, մեծացնում այդ բնագավառում ներդրվող գումարները)[12]։

Արտադրության ընդլայնման հետ մեկտեղ ավելանում էր նաև հանքերում աշխատող բանվորների թվաքանակը։ Այսպես, օրինակ, Զանգեզուրի շրջանում առաջնակարգ տեղ գրավող Ղաթարի հանքերում 1887 թ. աշխատում էր ընդամենը 95 բանվոր, 1893 թ.՝ 470, 1897 թ.՝ 370, իսկ արդեն 1901 թ.՝ 612 բանվոր[13]։ Այսպիսով, տասներեք տարվա ընթացքում Ղաթարի հանքերի բանվորների թիվը ավելացավ մոտ 6,5 անգամ։ Ալավերդու, Հալիձորի, Լազարևի հանքերում նույնպես աշխատում էին մեծ թվով բանվորներ, որոնց թվաքանակը ևս տարեցտարի աճում էր։ 1887—1900 թթ. Արևելյան Հայաստանի պղնձի հանքավայրերում աշխատող բանվորների թվաքանակի փոփոխությունների մասին պատկերացում է տալիս № 2 աղյուսակը[14]։

Աղյուսակ № 2

1887—1900 թթ. Արևելյան Հայաստանի պղնձահանքերում աշխատող բանվորների քանակն ըստ տարիների

Թվականներ	Գործող հանքերի քանակը	Բանվորների քանակը			Տոկոսներով
		հիմնական	օժանդակ	ընդհանուր	
1887	19	294	71	365	100
1888	22	332	91	423	115,9
1889	25	570	84	654	179.2
1890	25	820	145	965	264,4
1891	23	801	136	937	256.7
1892	19	610	121	731	200,3
1893	24	845	134	979	268,2
1894	26	675	143	818	224,1
1895	20	700	183	883	241,9
1896	17	463	108	711	194,8
1897	26	679	172	851	233,2
1898	20	755	167	922	252,6
1899	16	421	32	453	124,1
1900	8	528	183	571	156,4

[12] М. Г. Каспарова, Меднорудная промышленность дореволюционной Армении и иностранный капитал, Ереван, 1961, с. 89; ЦГИА Груз. ССР, ф. 264, оп. 1, д. 2943, л. I.

[13] А. Г. Симонян, К вопросу о численности пролетариата Армении в конце XIX—начале XX вв. («Рабочий класс России в период буржуазно-демократических революций», М., 1979, с. 125).

[14] Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների հիման վրա. «Сборник в 1887 г.», с. 144; «Сборник в 1888 г.», с. 165—166; «Сборник в 1899 г.», с. 7; «Сборник в 1890 г.», с. 135; «Сборник в 1891 г.», с. 151; «Сборник в 1892 г.», с. 167; «Сборник в 1893 г.», с. 176—179; «Сборник в 1894 г.», с. 198—199; «Сборник в 1895 г.», с. 190—191; «Сборник в 1896 г.», с. 120—121; «Сборник в 1897 г.», с. 194—195; «Сборник в 1898 г.», с. 193; «Сборник в 1899 г.», с. 199; «Сборник в 1900 г.», с. 210—211.

Ինչպես երևում է № 2 աղյուսակից 1887 թ. համեմատությամբ 1900 թ. հանքերում զբաղված բանվորների թվաքանակն աճել է 56,4%-ով։ Հանքերում աշխատող բանվորների թվաքանակը բարձր է եղել հատկապես 1890 թ. (965 բանվոր), 1891 թ. (937 բանվոր) և 1893 թ. (979 բանվոր)։ 1896 թ. գործող հանքերի քանակը նվազել է՝ հասնելով 17-ի։ Բնականաբար, կրճատվել է նաև բանվորների քանակը՝ 711։ Սակայն բանվորների թվաքանակի ամենամեծ անկումը նկատվել է 1899 թ. 453, նախորդ տարիների համեմատությամբ կրճատվելով մոտ կիսով չափ[15]։ Սակայն, ընդհանուր առմամբ մոտ 15 տարվա ընթացքում (1887—1900) հանքերում զբաղված բանվորների թվաքանակն աճել է՝ 365-ից հասնելով 571-ի։ Մեծ թվով բանվորներ էին աշխատում նաև պղնձաձուլական գործարաններում։

1880—1890 թթ. ռուսական կայսրությունում պղնձարդյունաբերական ոչ մի շրջան չի ապրել այնպիսի վերելք, ինչպես Կովկասը։ Պղնձարդյունաբերական այնպիսի հիմնական շրջան, ինչպիսին Ուրալն էր, նշված տասնամյակում ունեցել է ընդամենը 40% աճ, իսկ Կովկասը՝ 350% (37000-ից 139300 փութ)[16]։ Շատ ավելին էր պղնձի արտադրության աճն Արևելյան Հայաստանում՝ 480%։ Ռուսական կայսրությունում, ամբողջությամբ վերցրած, նշված տասնամյակներում պղնձարդյունաբերությունն աճել է ընդամենը 1,6 անգամ (211,5-ից 349,5 հազար փութ)։ Պղնձարդյունաբերության վերելքը շարունակվեց նաև 90-ական թվականներին։ 1891—1900 թթ. Արևելյան Հայաստանում պղնձի արտադրությունը 25,3 հազարից հասավ 83,5 հազար փթի[17], ավելանալով մոտ 3,3 անգամ։ Նման աճ չի ունեցել ո՛չ Անդրկովկասը (1,8 անգամ) և ոչ էլ Ռուսաստանը (1,5 անգամ)։ Ընդհանուր առմամբ 1880—1900 թթ. պղնձի արտադրությունն Արևելյան Հայաստանում աճեց մոտ 15,5 անգամ։

XIX դ. 90-ական թվականներից սկսած էական փոփոխություններ են կատարվում Արևելյան Հայաստանի պղնձարդյունաբերությունում։ Փակվում են մի քանի մանր գործարաններ, բացվում են նորերը։ Դնալով ուժեղանում է արտադրության կենտրոնացումը։ Մի շարք գործարաններ տեխնիկապես վերակառուցվում են։ Ալավերդու գործարանում 1895 թ. սկսում է գործել նոր վառարան և փայտածուխի փոխարեն օգտագործում են կոքս[18]։ 1897 թ., ինչպես նշվեց, Ալավերդու և ջրջակա գործարաններն ու հանքերն անցնում են «Կովկասի արդյունաբերական և մետաղագործական ընկերության» տնօրինությանը։ Վերջինս նոր կապիտալ ներդրումների շնորհիվ վերակառուցում է նշված գործարանները և որոշ չափով՝ հանքախորշերը։ Տեխնիկական որոշ փոփոխություններ են կատարվում նաև Զանգեզուրի շրջանի գործարաններում։ 1896 թ. վերջերին ավարտվում է նոր՝ «Այունիք» գործարանի կառուցումը, որն իր հզորությամբ մոտ երեք անգամ գերազանցում է այդ շրջանի մնացած գործարաններին՝ միասին վերցրած։ Սակայն, ընդհանուր առմամբ, այդ շրջանի պղնձարդյունաբերական գործարանների տեխնիկական զինվածությունը շարունակում էր մնալ ցածր։ Հանքերով հարուստ Զանգեզուրի շրջանի պղնձարդյունաբերության հետագա զարգացմանը և գործարանների տեխնիկական վերակառուցմանը խանգարում էր հատկապես երկաթուղուց հեռու գտնվելը և

---

15 1899 թ. բանվորների քանակը, մեր կարծիքով, խիստ նվազեցված է, քանի որ 1887—1900 թվականներին մեկ բանվորին ընկնող պղնձի հանույթը կազմում է մոտ 400—600 փութ, իսկ 1899 թ.՝ երկու հազար փթից ավելի, որն այդ շրջանի տեխնիկայի պայմաններում անհնարին էր։

16 А. Д. Брейтерман, նշվ. աշխ., էջ 90, О. Е. Туманян, Экономическое развитие Армении, ч. I, Ереван, 1954, с. 187—188.

17 Գրականությունում սովորաբար ընդունված է 71,5 հազար փութ՝ М. А. Адонц, նշվ. աշխ., էջ 418, М. Г. Каспарова, նշվ. աշխ., հավելված, աղյուսակ № 5, Մ. Հ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 194։ Ըստ «Ведомости медеплавильных заводов за 1900 г.» արխիվային գործի պղնձի արտադրությունը կազմել է 83,5 հազար փութ և գործել են ոչ թե 6, այլ 8 գործարան (Տես ЦГИА Груз. ССР, ф. 264, оп. 1, кн. 2, д. 3120, л. 7, 10, 12, 15, 18, 20, 24, 31, 36, 40, 42, 51, 52)։

18 ЦГИА Груз. ССР, ф. 12, оп. 1, д. 3158, л. 24, 29.

հարմար ճանապարհների բացակայությունը։ Երրորդ լեռնային շրջանի ինժեները նշում էր, որ Զանգեզուրի «գործարանների համար մեքենաների առաքումը, նույնիսկ մասնատված վիճակում, կապված է մեծագույն դժվարությունների հետ, իսկ հաճախ էլ հնարավոր չէ»[19]։

Պղնձարդյունաբերության զարգացմանն ու կենտրոնացմանը համընթաց վերջնականապես ձևավորվում է արտադրության այդ ճյուղի բանվորական ջոկատը, որը կազմում էր Արևելյան Հայաստանի բանվոր դասակարգի առաջավոր մասը։ Ի տարբերություն արտադրության մյուս ճյուղերում աշխատողների, բանվորական այս ջոկատն աչքի էր ընկնում նաև իր համախմբվածությամբ ու զարգացման համեմատաբար բարձր մակարդակով։ Պղնձարդյունաբերությունում աշխատող բանվորական ջոկատը միանգամից չկազմավորվեց. այն ունի իր նախապատմությունը։ Դեռևս XVIII դ. 60-ական թվականներին Ախթալայի, Ալավերդու և Շամլուղի գործարաններին ամրակցվեցին 32 հայկական գյուղեր (ավելի քան 7000 մարդ)։ Յուրաքանչյուր գյուղացի պարտավոր էր տարվա ընթացքում մեկ ամիս աշխատել գործարաններում ու հանքերում[20]։ Զանգեզուրի լեռնարդյունաբերական շրջանում հարկադրական աշխատանքը տարածում չգտավ և հենց սկզբից էլ կիրառվեց վարձու աշխատանք։ Սկզբնական շրջանում վարձվածները հիմնականում Թուրքիայից գաղթած հույն պղնձարդյունաբերողներն էին, որոնք Արևելյան Հայաստան էին եկել դեռևս XVIII դ. 60-ական թվականներին (մոտ երկու հազար հույն)։ 1880-ական թվականներին, կապիտալիստական հարաբերությունների հետագա խորացման հետևանքով, նրանց մեծ մասը զրկվել էր արտադրության միջոցներից և վերածվել վարձու բանվորների։ Պղնձարդյունաբերությունում աշխատող բանվորների կազմը համալրվում էր նաև գյուղացիության հաշվին, որը քայքայվում ու զրկվում էր արտադրության միջոցներից, «ստվարացնում պրոլետարիատի շարքերը և մարդկային նյութ մատակարարում խոշոր կապիտալիստական արդյունագործությանը»[21]։ Գյուղից նոր դուրս եկած, գյուղական աշխատանքներից նոր կտրված բանվորները, բնականաբար, չէին կարող ունենալ անհրաժեշտ որակավորում։ Այդ մասին բողոքների շատ հաճախ կարելի է հանդիպել Կովկասի լեռնային վարչության ամենամյա հաշվետվություններում։ Որպես բացառություն հիշատակվում է միայն Ալավերդու գործարանը, որն ապահովված է եղել համապատասխան որակավորում ունեցող բանվորներով[22]։

Պղնձարդյունաբերությունում աշխատող բանվորները հիմնականում կենտրոնացված էին այնպիսի խոշոր գործարաններում, ինչպիսիք էին Ալավերդին, Սյունիքը, Ղաթարը և Հալիձորը։ Դարի 80—90-ական թվականներին գործարանում աշխատող բանվորների քանակի և քանակական փոփոխությունների մասին կարելի է դատել № 3 աղյուսակի տվյալներով[23]։

Ինչպես երևում է № 3 աղյուսակից, արտադրության նշված ճյուղում աշ-

---

19 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 1, գ. 31, թ. 4։

20 М. Г. Каспарова, նշվ. աշխ., էջ 161։

21 Ս. Շահումյան, Երկեր, հ. 1, Երևան, 1974 էջ 153։

22 ЦГИА Груз. ССР, ф. 12, оп. 1, д. 3158, л. 33 об.

23 Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների հիման վրա՝ ЦГИА Груз. ССР, ф. 264, оп. 1, кн.1, д. 1030, л. 15—15 об, 16, 17 об, 43—43 об, 45—47 об, 49, 192—194; Кавказский календарь на 1883 г., отд. 1, с. 192—194; Там же на 1886 г., отд. III, с. 220; Там же на 1887 г., с. 135; ЦГИА Груз. ССР, ф. 264, оп. 1, кн. 1, д. 5737, л. 4 об, 9 об, 10 об, 19 об, 88 об, 94 об, 97 об; «Сборник в 1886 г.», с. 152—153; «Сборник в 1887 г.», с. 148—149; «Сборник в 1888 г.», с. 170—173; «Сборник в 1889 г.», с. 10—11; «Сборник в 1890 г.», с. 138—139; «Сборник в 1891 г.», с. 152—155; «Сборник в 1892 г.», с. 168—171; «Сборник в 1893 г.», с. 176—179; «Сборник в 1894 г.», с. 200—203; «Сборник в 1895 г.», с. 192—195; «Сборник в 1896 г.», с. 212—213; «Сборник в 1897 г.», с. 196—199; «Сборник в 1898 г.», с. 194—197; «Сборник в 1899 г.», с. 200—201; «Сборник в 1900 г.», с. 212—215; ЦГИА Груз. ССР, ф. 264, оп. 1, кн. 2, д. 3120, л. 7—51.

խատող բանվորների քանակական փոփոխությունները, առանձին շեղումներով հանդերձ, ուղիղ համեմատական են պղնձարտադրության հետ։ 1882—1884 թթ. պղնձի արտադրությունն Արևելյան Հայաստանում, 1880 թ. համեմատությամբ, նվազել է։ Նվազել է նաև բանվորների թվաքանակը՝ 393-ից հասնելով 301-ի։ 1885 թ. պղնձի արտադրությունը, ինչպես նաև բանվորների թվաքանակն ավելացել է՝ 1888 թ. հասնելով 475-ի։ 1889 թ. բանվորների թվաքանակը կրճատվել է մոտ կիսով չափ (49,3%-ով) և 1880 թ. մակարդակը գերազանցվել է միայն 1893 թ.՝ 404 բանվոր։ Ինչպես նշվեց, 1897 թ. Ալավերդու շրջանի գործարանները անցան «Կովկասի արդյունաբերական և մետաղագործական ընկերության» ձեռքը, և ընկերությունը ձեռնամուխ եղավ դրանց տեխնիկական վերակառուցմանը, որի հետևանքով նվազեց թե՛ պղնձի արտադրությունը և թե բանվորների թվաքանակը։ Գործարանների տեխնիկական վերափոխումներն ավարտվում են հիմնականում 1900 թ. կեսերին, որից հետո պղնձի արտադրությունը Արևելյան Հայաստանում կտրուկ բարձրանում է։

Աղյուսակ № 2

Պղնձի արտադրությունը և գործարաններում աշխատող բանվորների թվաքանակն ըստ տարիների

Թվականներ	Գործարանների քանակը	Պղնձի քանակը	Տոկոսով	Բանվորների քանակը			Տոկոսներով
				հիմնական	ժամանակ	ընդհանուր	
1880	9	5364	100	315	78	393	100
1881	6	7309	136,3		358	358	91,1
1882	5	5224	97,4	—	—	—	—
1883	4	5005	93,3		286	286	72,8
1884	4	5255	98,0		301	301	76,6
1885	5	8588	160,1	374	103	477	121,4
1886	6	9366	174,6	412	98	510	129,8
1887	7	18486	344,6	404	135	539	137,2
1888	7	27585	514,3	366	109	475	120,9
1889	7	27572	514,0	125	78	203	51,7
1890	7	26156	487,6	146	80	226	57,5
1891	8	25307	471,8	154	160	314	79,9
1892	8	30572	570,0	186	83	269	68,5
1893[24]	8	41387	771,6	273	134	404	122,4
1894	8	46247	862,2	175	198	373	94,9
1895[25]	9	42348	789,5	214	197	411	104,6
1896	6	32624	608,2	213	105	318	80,9
1897	8	39067	728,3	226	183	409	14,1
1898	8	35164	655,6	203	54	257	65,4
1899	6	29160	543,6	198	22	220	56,0
1900	8	83531	1557,3	243	63	306	77,9

Արևելյան Հայաստանի լեռնարդյունաբերության երկրորդ կարևոր ճյուղը աղի արդյունահանումն էր։ Աղահանքեր կային և՛ Երևանի նահանգում (Կողբ, Նախիջևան, Սուստին), և՛ Կարսի մարզում (Կաղզվան, Օլթի), որոնց շահագործման իրավունքը, բացի Սուստինից, որը մասնավոր էր, սովորաբար, պետության կողմից որոշակի ժամկետով տրվում էր վարձույթով։ Նման դեպքերում կնքվում էր հատուկ պայմանագիր, որը վավերացվում էր Կովկասի շրջ-

[24] 1893 թ. «Сборник»-ում Ղաթարի գործարանի բանվորների քանակը նշված է 504։ Անհավանական է, ուստի ընդհանուր գումարին ավելացված է հաջորդ տարվա քանակը՝ 35։

[25] 1895 թ. «Сборник»-ում նշված է, որ Սյունիքի գործարանում արտադրվել է 3884 փութ պղինձ։ Սակայն 1896 թ. այն չի գործել (տե՛ս ЦГИА Груз. ССР, ф. 264, оп. 1, кн. 1, д. 2385, л. 4—90), որտեղ տրված են այդ տարվա գործարանները իրենց արտադրանքով։

ջանի լեռնային վարչության կողմից[26]։ Քննվող ժամանակաշրջանում՝ XIX դ. 80—90-ական թվականներին, աղահանքերի շահագործման իրավունքը տրված էր Ջանփոլադյաններին։ Նրանք, կատարելով որոշ տեխնիկական վերափոխումներ, կիրառելով հորատման նոր եղանակներ (հատկապես պայթեցումներ)[27], օգտագործելով հատուկ բրիշներ[28], ընդլայնեցին աղի հանույթը։

Արևելյան Հայաստանում արդյունահանված աղը վաճառվում էր ոչ միայն Կարսի մարզում, Երևանի և Թիֆլիսի նահանգներում, այլև արտահանվում էր Թուրքիա[29]։

Աղի արդյունահանման տնտեսական նշանակությունը ցարական կառավարության համար բավականին կարևոր էր։ Դարի վերջին Կովկասի լեռնային վարչության ինժեներներից մեկը նույնիսկ առաջարկում էր կառուցել «թեկուզ նեղլիծ երկաթուղի Սարդարապատ կայարանից մինչև Կողբի աղահանքերը, որը, նկատի ունենալով տեղանքի հարմար պայմանները, կարժենա ոչ թանկ և միշտ էլ կարդարացնի իրեն»[30], տեղափոխելով արդյունահանված աղը։ Երկաթուղու կառուցումը միևնույն ժամանակ կնպաստեր աղի հանույթի ընդլայնմանը։ Նշված երկաթուղագիծն այդպես էլ չկառուցվեց, սակայն աղի հանույթն Արևելյան Հայաստանում տարեցտարի ընդլայնվում էր և 1900 թ. արդեն կազմում էր մոտ 1,5 մլն փութ, 1880 թ. համեմատությամբ ավելանալով մոտ երեք անգամ։ Այդ մասին ավելի կոնկրետ պատկերացում է տալիս № 4 աղյուսակը[31]։

Ինչպես երևում է աղյուսակից, աղի արդյունահանումն Արևելյան Հայաստանի տարբեր հանքավայրերում աճում էր տարբեր համամասնությամբ։ Նրկատենք նաև, որ դիտարկվող ժամանակաշրջանի վերջին տասնամյակում աղի արդյունահանման աճը, ընդհանուր առմամբ, դանդաղեց, իսկ Նախիջևանում և Սուստինում 1900 թ. ավելի քիչ աղ արդյունահանվեց, քան 1890 թ.։

Աղահանքերում վարձու աշխատանքը սկսեց կիրառվել 1868 թ.։ Վարձու բանվորները հիմնականում շրջակա գյուղերի բնակիչներն էին, որոնց մեծամասնությունն ուներ իր տնտեսությունը և զբաղվում էր նաև գյուղատնտեսական աշխատանքներով։ 1885 թ. Արևելյան Հայաստանի աղահանքերում աշխատել է ընդամենը 83 բանվոր (օժանդակ աշխատողների թիվը հայտնի չէ)։ Հինգ տարի անց՝ 1890 թ., բանվորների թվաքանակը հասնում է 262-ի։ Հետագա տարիներին այն գնալով նվազում է։ 1900 թ. աղահանքերում աշխատում էր ընդամենը 89 բանվոր։ Ընդհանուր առմամբ բանվորների թվաքանակը 1885—

---

26 ЦГИА СССР, ф. 37, оп. 32, д. 17, л. 46, 59։

27 Նույն տեղում, թ. 5, 6։

28 А. С. Амбарян, Развитие капиталистических отношений в армянской деревне (1860—1920). Ереван, 1959, с. 28, Նույնի, Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների համառոտ պատմություն, Երևան, 1983, էջ 22։

29 А. С. Амбарян, նշվ. աշխ., էջ 28։

30 ЦГИА Груз. ССР, ф. 264, оп. I, кн. 2, Д. 2959, л. 15.

31 Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների հիման վրա. ЦГИА СССР, ф. 37, оп 30, д. 112, л. 40; Кавказский календарь на 1883 г., с. 199; ЦГИА Груз. ССР, ф. 264, оп. 1, кн. 1, д. 1030, с. 27 об; Кавказский календарь на 1895 г., отд. III, с. 276; Там же, на 1896 г., отд. III, с. 221; Там же на 1897 г., с. 136; Там же на 1898 г., отд. III, с. 97; ЦГИА Груз. ССР, ф. 264, оп. 1, кн. 1, д. 5737, с. 117 об— 118; «Сборник в 1887 г.», с. 172; ЦГИА Груз. ССР ф. 264, оп. 1, кн. 1, д. 1542, л. 14; Кавказский календарь на 1890 г., с. 66; «Сборник в 1889 г.», с. 156; «Сборник в 1890 г.», с. 243; «Сборник в 1891 г.», с. 259; «Сборник в 1892 г.», с. 278; «Сборник в 1893 г.», с. 304— 305; «Сборник в 1894 г.», с. 331— 332; «Сборник в 1895 г.», с. 335— 336; «Сборник в 1896 г.», с. 363— 364; «Сборник в 1897 г.», с. 353— 354; Кавказский календарь на 1899 г., отд. III, с. 60; «Сборник в 1898 г.», с. 354; ЦГИА Груз. ССР, ф. 264, оп. 1, кн. 1, д. 2912, ч. 1, л. 83— 84; «Сборник в 1899 г.», с. 379; «Сборник в 1900 г.», с. 418.

Աղյուսակ № 1

Աղի արտյունահանումը Արևելյան Հայաստանում 1880—1900 թթ. ըստ հանքավայրերի (փթերով)

Գործող հանքերը	1880 թ.	1881 թ.	1882 թ.	1883 թ.	1884 թ.	1885 թ.	1886 թ.	1887 թ.	1888 թ.	1889 թ.
Երևանի նահանգ										
1. Կողբի	330782	365800	425597	535916	740142	320441	624731	939608	52516	166898
2. Նախիջևանի	20190				8900	162055	295661	309224	241685	28031
3. Սուստինի	107120	1346.0	107600	23000	—	460000	140657	67088	83160	194816
Կարսի մարզ										
1. Կաղզվանի	36780	48000	101100	103600	114897	2603.0	710225	472468	310704	317803
2. Օլթիի	--	—	—	—	—	—	—	—	370.7	33322
ընդամենը	494872	548400	624297	675516	863939	1202796	1771277	1788388	725072	740870

Գործող հանքերը	1890 թ.	1891 թ.	1892 թ.	1893 թ.	1894 թ.	1895 թ.	1896 թ.	1897 թ.	1898 թ.	1899 թ.	1900 թ.
Երևանի նահանգ											
1. Կողբի	447172	323204	501725	639242	912597	720676	559724	480613	1102549	914790	803600
2. Նախիջևանի	178862	246692	256769	105667	176217	94534	168324	192614	165527	307242	195484
3. Սուստինի	158257	210 00	172491	105985	143119	156142	149358	234207	77000	—	—
Կարսի մարզ											
1. Կաղզվանի	334935	186210	385632	221208	220716	427376	502422	522420	574858	581934	457749
2. Օլթիի	60302	69109	16399	36693	25794	24500	72445	74431	35600	16728	59010
ընդամենը	1179558	1035145	1336016	1107795	1480523	1423228	1452273	1504285	1955534	1820724	1520843

1900 թթ. ավելանում է աննշան չափով, որի մասին են վկայում № 5 աղյուսակի տվյալները։

Աղահանքերում աշխատող բանվորների դրությունը բավական ծանր էր։ Նրանք աշխատում էին արևածագից մինչև մութն ընկնելը[32]։ Աշխատանքային օրը բավականին երկար էր նաև պղնձարդյունաբերությունում։ XIX դ. 90-ական թվականներին Զանգեզուրի և Ալավերդու գործարաններում սովորաբար կիրառվում էր 12-ժամյա աշխատանքային օր[33]։ Պղնձարդյունաբերության զարգացմանը համընթաց ուժեղանում էր նաև բանվորների շահագործման աստիճանը։ Ճիշտ է, բարձրանում էր նաև աշխատավարձը, բայց դա էականորեն չէր ազդում բանվորների նյութական բարեկեցության վրա, քանի որ աճում էին նաև առաջին անհրաժեշտության առարկաների ու սննդամթերքների գները, և փաստորեն ռեալ աշխատավարձը մնում էր նույնը։ Պղնձարդյունաբերությունում սովորաբար կիրառվում էր օրավճար սիստեմ։ Այսպես, Զանգեզուրի հանքերում չորակավորված բանվորների օրական աշխատավարձը կազմում էր 40—60 կոպեկ[34]։ Մի փոքր ավելի բարձր էր Ալավերդու շրջանի գործարաններում աշխատող բանվորների աշխատավարձը՝ 80 կ.—1 ռ. 20 կոպ, վարպետների-

Աղյուսակ № 5

Աղահանքերում աշխատող բանվորների քանակը ըստ տարիների[35]

Թվականները	Բանվորների քանակը			Թվականները	Բանվորների քանակը		
	հիմնական	օժանդակ	ընդհանուր		հիմնական	օժանդակ	ընդհանուր
1880	—	—	—	1891	122	36	158
1881	—	—	—	1892	76	78	154
1882	—	—	—	1893	134	30	164
1883	—	—	—	1894	108	50	158
1884	—	—	—	1895	109	29	138
1885	83	—	83	1896	78	35	113
1886	163	—	163	1897	84	21	105
1887	160	—	160	1898	47	45	92
1888	65	—	65	1899	95	—	95
1889	156	—	156	1900	70	19	89
1890	184	78	262				

32 «Մուրճ», 1896, № 2, էջ 286—287։

33 М. А. Адонц, նշվ. աշխ., էջ 527։

34 М. Шостак, նշվ. աշխ., էջ 16։

35 Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների հիման վրա. ЦГИА СССР, ф. 37, оп.30, д. 112, л. 40; Кавказский календарь на 1883 г., с. 199; ЦГИА Груз. ССР, ф. 264, оп. 1, кн. 1, д. 1030, л. 27 об; Кавказский календарь на 1895 г., отд. III, с. 276; Там же на 1886 г., отд. III, с. 221; Там же на 1887 г., с. 136; Там же на 1888 г., отд. III, с. 97; ЦГИА Груз. ССР, ф. 264, оп. 1, кн. 1, д. 5737, л. 117—118; Кавказский календарь на 1888 г., отд. III, с. 97; «Сборник в 1887 г.», с. 172; ЦГИА Груз. ССР, ф. 264, оп. 1, кн. 1, д. 1542, л. 14; Кавказский календарь на 1890 г., с. 66; «Сборник в 1889 г.», с. 156; «Сборник в 1890 г.», с. 243; «Сборник в 1891 г.», с. 259; «Сборник в 1892 г.», с. 278; «Сборник в 1893 г.», с. 304— 305; «Сборник в 1894 г.», с. 331—332; «Сборник в 1895 г.», с. 335—336; «Сборник в 1896 г.», с. 363—1364; «Сборник в 1897 г.», с. 353—354; Кавказский календарь на 1899 г., отд. III, с. 60; «Сборник в 1898 г.», с. 354; ЦГИА Груз. ССР, ф. 264, оп. 1, кн. 1, д. 2912, ч. 1, л. 83—84; «Сборник в 1899 г.», с. 379; «Сборник в 1900 г.», с. 418.

նը՝ մինչև 1 ռ. 50 կոպեկ։ Օժանդակ բանվորները ստանում էին ավելի քիչ՝ օրական 60—80 կոպեկ[36]։

Պղնձահանքերում աշխատող բանվորների կազմը բավականին բազմազգ էր։ 1897 թ. մարդահամարի տվյալների համաձայն Ալավերդու և Շամլուղի գործարաններում և հանքերում աշխատում էին բավական թվով հույներ[37], Սակայն նրանց տեսակարար կշիռը մեծ արագությամբ նվազում էր։ Զանգեզուրի շրջանի գործարաններում և հանքերում հայերը կազմում էին բանվորների մոտ 26%-ը[38], Քիչ չէր պարսիկների և ադրբեջանցիների թվաքանակը։ Բացի նշված ազգություններից, այդ շրջանի պղնձարդյունաբերությունում աշխատում էին նաև որոշ թվով ռուսներ ու հույներ։

Այսպիսով, քննվող ժամանակաշրջանում, պղնձարդյունաբերության և ածի հանույթի բուռն զարգացման շնորհիվ, նրանում նոր աշխատավորական զանգվածների ընդգրկման հետևանքով, գնալով աճում էր այդ ճյուղերում դրաղված բանվորների թվաքանակը։ Ինչպես երևում է վերը բերված աղյուսակներից, աղի և պղնձի արտադրությունում բանվորների թվաքանակը 1887 թ. սկսած աճել է, 1893 թ. հասնելով իր բարձրակետին՝ 1547։ Դարի վերջին տարիներին, ինչպես արդեն ասվեց, կապված պղնձարդյունաբերական ղործարանների վերակառուցման հետ, բանվորների քանակը նվազում է։ 1900 թ. սկսվում է պղնձարդյունաբերությունում և աղահանքերում աշխատող բանվորների թվաքանակի սեը, որը շարունակվում է նաև XX դ. առաջին տարիներին։

Այսպիսով, փաստերը ցույց են տալիս, որ XIX դ. 80—90-ական թվականներին լեռնարդյունաբերության զարգացման հետևանքով արտադրության այդ ճյուղում ձևավորվեց և քանակապես աճեց Արևելյան Հայաստանի բանվոր դասակարգի առաջավոր ջոկատներից մեկը, որն իր որոշակի ներդրումն ունեցավ գալիք հեղափոխական պայքարում։

ГОРНАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ И КОЛИЧЕСТВО ЗАНЯТЫХ В НЕЙ РАБОЧИХ (80—90-е ГОДЫ XIX В.)

ГАСПАР КИРАКОСЯН

Резюме

В 80—90-х годах XIX в. добыча медной руды в Восточной Армении увеличилась приблизительно в 2 раза (до 407881 пуда), производство меди—в 15,5 раза (83531 пуда), а добыча соли—более чем в три раза (1452273 пудов). В связи с этим росло и число рабочих, занятых в этих отраслях, составив в конце XIX в. около 1000 человек.

---

36 «Район Тифлисско-Карско-Эриванской железной дороги в экономическом и коммерческом отношениях», Тифлис, 1897, с. 58.

37 «Первая всеобщая перепись Российской империи 1897 г.», т. 69, СПб., 1905, с. 200—205.

38 Նույն տեղում, էջ 63, 142—143։